ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE71-F75D-46D5-AC90 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/4427/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու մասին

21 ապրիլի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով ըստ հայցի «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի՝ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.03.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/4427/02/25 քաղաքացիական գործի վարույթը վերսկսելու անհրաժեշտության հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. ապրիլի 23-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի՝ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.03.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 2025թ. ապրիլի 29-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 2025թ. հունիսի 5-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերսկսում է գործի վարույթը:
Սույն գործով դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու հիմքը փորձաքննության նշանակումն է: Հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ գործի վարույթը վերսկսելու հիմք կարող է լինել համապատասխան փորձաքննության ավարտը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի վարույթը կասեցվել է մինչև թիվ ԵԴ2/0099/02/25 քաղաքացիական գործով վերջնական եզրափակիչ ակտ կայացվելը, իսկ էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում թիվ ԵԴ2/0099/02/25 քաղաքացիական գործի վերաբերյալ արտացոլված տեղեկատվությունից հետևում է, որ քաղաքացիական գործով կայացվել է վերջնական եզրափակիչ ակտ, Դատարանը եզրահանգում է, որ թիվ ԵԴ2/4427/02/25 քաղաքացիական գործի վարույթը ենթակա է վերսկսման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-160, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ըստ հայցի «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի՝ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.03.2025թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ2/4427/02/25 քաղաքացիական գործի վարույթը

վերսկսել:

Թիվ ԵԴ2/4427/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. ապրիլի 30-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am